ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան

1826-1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Մատենադարան, Լազարյանների արխիվ, ռուս-պարսկական պատերազմ, վավերագրեր, Ներսես Աշտարակեցի, ռուսական քաղաքականություն, նամակներ։*

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի մասին պատմագիտական հարուստ գրականություն կա։ Տպագրվել են բազում ժողովածուներ ու աշխատություններ, որոնցում վերհանվել են այդ պատերազմին նախորդած ու բուն պատերազմին վերաբերող իրադարձությունները։ Կարծում ենք՝ սխալված չենք լինի նշել, որ պատերազմական իրադարձությունների նկարագրության հիմնական աղբյուրները ռուս պատմաբանների աշխատություններն են[1]։ Տակավին ուսումնասիրությունից դուրս են մնացել պատերազմին վերաբերող հայկական վավերագրերը։

Ներկա հրապարակումը թելադրված է մեր պատմագիտության մեջ այդ բացը լրացնելու հանգամանքով։ Մեր կարծիքով, հայկական աղբյուրների առավելությունը ռուսականի հանդեպ պայմանավորված է հայ հեղինակների մտածելակերպի յուրահատկությամբ. թեև առանձին հարցերում նրանք ևս «նվիրվածություն» են դրսևորել ռուսական կառավարությանը։ Մյուս կողմից, սակայն, ցուցաբերած դիվանագիտական «հնարքների» հետ միասին, նրանք փորձել են առաջ տանել հայոց խնդիրը, ձգտելով ազդել ռուսական կառավարության վրա՝ հայանպաստ որոշումներ ընդունելու համար։ Այս առումով սույն հոդվածում ներկայացված նամակները բնորոշում են ժամանակի հայ գործիչների, ազդեցիկ հոգևորականության տեսլականը հայ ժողովրդի ապագայի վերաբերյալ։ Մաշտոցյան Մատենադարանի Լազարյանների արխիվն այդ հնարավորությունը հետազոտողին լիովին ընձեռում է. բազում այդպիսի նամակներ են պահպանվել,

---

[1] **Վ**. **Ռոտտո**, *Кавказская война в отдельных очерках*, *эпизодах, легендах и биографиях*, т. 3, *Персидская война 1826-1828 г.*, СПб, 1888, **Н**. **Дубровин**, *История войны и владычества русских на Кавказе*, т. VI, СПб, 1888, **П**. **Ковалевский,** *Завоевание Кавказа Россией*, СПб, 1887.

որոնցում լուսաբանվում են ամենատարբեր բնույթի հարցեր: Մենք փորձել ենք դրանք խմբավորել՝ ելնելով պատերազմի ընդհանուր տրամաբանությունից և այդ պատերազմում հայության առջև ծառացած հարցերի տեսանկյունից[2]*:*

Մատենադարանի Լազարյանների արխիվում պահվող նամակներում քննարկվող առաջին խումբ հարցերը վերաբերում են բուն պատերազմական գործողություններին: Հայտնի է, որ հայության համար առանձնակի նշանակություն են ունեցել Արցախ-Ղարաբաղում և Երևանի խանությունում ծավալված մարտերը: Այս թեմային վերաբերող նամակները ոչ միայն բնութագրում են իրական ռազմական գործողությունները, այլև ցույց են տալիս հայության ակնկալիքներն այդ պատերազմում:

*Ներկայացվող առաջին նամակը գրել է Ներսես Աշտարակեցին 1826 թ. սեպտեմբերի 13-ին. այն հասցեագրված է Հովհաննես և Խաչատուր Լազարյաններին: Նամակի թվագրումը վկայում է, որ այն գրվել է Ելիզավետպոլի հայտնի ճակատամարտից անմիջապես հետո: Արքեպիսկոպոս Ներսեսը Լազարյաններին տեղեկացնում է պարսից զորքերի կողմից Շիրակավանն ասպատակելու և սարբազների սանձազերծած կոտորածների ու բռնությունների մասին. «**անցեալ ամսեանն օգոստոսին յաղագս տմարդի յարուցմանցն պարսից ընդդեմ մարդասիրութեանց Իւրոյ Կայսերական մեծութեանն, և ասպատակութեանց նոցա ի սահմանս Շիրակաւանայ և գերեվարութեանց և կոտոտածի Հայկազանց բազմաց ու աւազակական գողամարտութեամբ**»*[3]*: Ինչպես նկատելի է, Ներսեսն ընդգծված անհանդուրժողականություն է դրսևորում պարսից տիրապետության հանդեպ, ուստի խիստ քննադատության է արժանացնում պարսիկների դաժան վերաբերմունքը հայերի և վրացիների հանդեպ. «մինչդեռ նոր անդէն զուարթացեալ էին երեսք հասարակութեան քրիստոնեից հայոց և վրաց նեղելոց ի դարուց ժամանակաց յերեսաց այնպիսի ամբարիշտ բնաւորութեանց պարսից բարբարոսաց»*[4]*: Անշուշտ, Ներսես Աշտարակեցու նամակի այս տողերն աղբյուրագիտական արժեք ունեն. համեմատության համար նկատենք, որ ռուսական աղբյուրներում տեղի բնակչության, մասնավորապես հայ ժողովրդի հանդեպ իրականացված բռնությունների, այդ պատերազմներում հայ ժողովրդի կրած տառապանքների փաստագրումը, բացառությամբ հատ ու կենտ աշխատությունների, մոռացության է մատնվել:*

---

[2] Ուշադրության արժանի է XIX դարի նշանավոր պատմաբան Աղ. Երիցյանի «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում» (Թիֆլիս, 1894, մասն Ա.) աշխատությունը, որտեղ ներկայացված են ներկա հոդվածում առանձին նամակներից բերվող հատվածներ, սակայն, ցավոք, մեծանուն պատմաբանը տողատակում չի նշում հայթայթման աղբյուրը, ինչը, բնականաբար, հետազոտողի համար դժվարություն է առաջացնում:

[3] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 103, գործ 9, վավերագիր 82, թ. 1:

[4] Նույն տեղում:

*Հատկապես ուշագրավ են նամակի այն տողերը, որտեղ Ներսեսն իր և հայ ժողովրդի տարակուսանքն է հայտնում է ռուսական արքունիքի կայացրած որոշման առթիվ, ըստ որի՝ Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ալեքսեյ Երմոլովը «ուղարկվում է պայքարելու երկրի թշնամիների դեմ, իսկ նրա փոխարեն նշանակվելու էր Իվան Պասկևիչը. «**Բաձրագույն հրաման առ նորին բարձր գերազանց Ալեքսեյ Պետրովիչ Երմօլով հռչակավոր կուսակալը՝ լինել վրեժխնդիր վնասապարտից հպատակաց** Իւրոյ Մեծութեանն.... Կասկածք կանխափորձք, որք սասանեցուցանեն զմիտս մեր և բազմաց, թէպէտև մեծ է ի մեզ յոյսն հաստատեալ ի վերայ ամենայոյ»[5]: Նամակից կարելի է ենթադրել, որ արքեպիսկոպոսին արդեն հասանելի էր դարձել տեղեկությունը, թե շուտով Ալեքսեյ Երմոլովին պետք է փոխարինի գեներալ Իվան Պասկևիչը: Այդուհանդերձ, արքեպիսկոպոս Ներսեսը հայտնում է, թե անձամբ իրեն հուզում է այն հարցը, որ Երմոլովն արդեն քաջածանոթ էր պարսից բարբարոսություններին ու նենգություններին և կարողանում էր քրիստոնյաներին պաշտպանել պարսից կողմից սպառնացող «մշտնջենաւոր ավազակութիւն»-ներից. «... **Ողորմած տիարք, քաջածանօթ է ամենեցուն ասիականաց՝ առաւել ևս Հայոց և Վրաց՝ բարբարոսական բնաւորութեամբ խորամանկ ազգին պարսից և արիւնախանձ թշնամութիւն նոցա ընդ ամենայն ազգս քրիստոնէից...**», - գրել է Աշտարակեցին[6]:*

*Արքեպիսկոպոս Ներսեսն ի դեմս գլխավոր հրամանատար Ալեքսեյ Երմոլովի և հայազգի գեներալ Վալերիան Մադաթովի էր տեսնում Հայաստանի ազատագրության հեռանկարը և մի առանձին հրճվանք է ապրել, տեղեկանալով ռուս-պարսկական պատերազմի սկզբում նրանց տարած հաղթանակների մասին: Ղարաբաղյան ճակատում ռուսների տարած հանրահայտ երկու հաղթանակներից անմիջապես հետո՝ 1826 թ. սեպտեմբերի 29-ին, Հովհաննես արքեպիսկոպոսին հղած նամակում Ներսես Աշտարակեցին մանրամասն պատմում է Շամխորի ճակատամարտում Մադաթովի տարած փայլուն հաղթանակի մասին, թե ինչպես են գերավարել պարսկական ջոկատի հրամանատար Ամիր խանին և պարսիկ սարբազներին, հայտնում է պարսկական կողմից երեք հազար զոհերի մասին և այլ կարևոր մանրամասներ. «**Այն ինչ բազմութիւն Զօրաց թշնամեաց ահաւորիւն կշռադատեալ լինէին ի կարծիս հզօրաց՝ որոց անծանօթ էին զօրութիւնք նոցին և տկարութիւնք ի հզօրանալ հարկին ընդ յառաջ առաքեցաւ նոցա կնեազ Մատաթեանց պատրաստական** զօրօք գտանեցելովք. և հասեալ ի Շամքօր, եգիտ Անդէն զբանակ Մեծ հետևակաց և հեծելոց պարսից՝ որոց զօրավար էր Ամիրխան սարտար քեռի Ապպաս Միրզայի և մի յորդւոց նորին Ապպասայ և*

[5] Նույն տեղում:
[6] Նույն տեղում:

*օգնականութեամբ հզօրին աստուծոյ հզօրացեալ սակաւուքն ի վերայ բազմաց։ ...**Ապպաս Միրզայի զանձինս ավելի քան ինն հարիւր ընդ որս և յայլոց զօրականաց մինչև ցլրումն 1100, գերելոց առ ժամանաւն որոց թիւ մինչև ցարեգականն մուտ հասեալ մինչ 1700։** ... Կնեազ Մատաթեան զկնի ընթացեալ փախստէից տակաւին ոչ եհաս այսր լուր վերադարձի նորա և գործոց գործելոց նորին ի հալածումն արքայորդւոյն պարսից»[7]։ Նամակում հիշատակվում է նաև ճակատամարտում ռուս գեներալ Գրեկովի մահվան, պարսից զորքերի ջախջախման և հետապնդման, ձեռք բերած ավարի, գերիների թվի մասին, առանձնանակի նշվում է ռուսաց բանակին Շուշի քաղաքի հայ բնակչության ցուցաբերած հավատարմության մասին. «Հռչակաւոր է հաւատարմութիւն հայոց բնակելոց ի Շուշի քաղաքի և ի մերձակայն նորին, որք ըստ չափու երից հազարաց զինուորեալք ընդ զինուորութեանն ռուսաց»[8]։ Նամակում ուշագրավ այլ տեղեկություններ ևս կան. արքեպիսկոպոսը հատնում է, որ Ելիզավետպոլի ճակատամարտում գերիների թվում է եղել նաև Աբաս Միրզայի թարգման Մելիք Հովսեփի Բեգլարյանը։ Գրում է նաև, որ էջմիածնից լուր չկա, քանի որ ուղարկված լրտեսները կամ կալանավորվել են, կամ սպանվել, իսկ մեկը ճանապարհը չգտնելով՝ վերադարձել է[9]։ Այս տողերից կարելի է եզրակացնել, որ էջմիածինն ունեցել է լրատվություն հասցնողների սեփական ցանց, որպեսզի արագ և թարմ տեղեկություններ փոխանցեն Մոսկվա՝ Լազարյաններին։ Այս տեղեկությունները Լազարյանների համար մեծ գին ունեին. դրանց ճշմարտացիությունից էր կախված թագավորի վստահության աստիճանն իրենց հանդեպ։

Ներկայացված նամակներից մեկ եզրակացություն ևս կարելի է անել. հետագա իրադարձությունների ծավալումը և Ներսեսի հանդեպ Իվան Պասկևիչի անվստահությունը մեզ հուշում է, որ արքեպիսկոպոսն իր հերթին, այդ ժամանակից սկսած, որոշակի անվստահություն է ունեցել նորանշանակ հրամանատար Իվան Պասկևիչի հանդեպ։ Համենայն դեպս, Պասկևիչ-Ներսես հակամարտությունը վերագրվում է ռուս-պարսկական պատերազմի վերջին շրջանին[10], ինչն այս նամակի տրամաբանությանը հակառակ է. նամակի թվագրումը ցույց է տալիս, որ այն գրվել է պատերազմի սկզբում։

Լազարյանների արխիվում ռուս-պարսկական պատերազմի 1826 թ. իրադարձությունների քննության առումով մեր ուշադրությունը գրաված հաջորդ նամակի հեղինակը ևս Ներսես Աշտարակեցին է։ Ընդհանրապես, հարկ է նշել,

---

[7] Նույն տեղում, վավ. 83, թ. 1-2։

[8] Նույն տեղում։

[9] Նույն տեղում։

[10] **Հ. Հովհաննիսյան**, «Ներսես Աշտարակեցի. Պաշտպան հայրենյաց», *էջմիածին*, 2000, ե, էջ 112-121։

որ մեծանուն այս հոգևորականի նամակներին ամենուր կարելի է հանդիպել Լազարյանների արխիվում, ինչը հիմք է տալիս պնդելու, որ նրա և Լազարյանների մտերմությունն ու փոխադարձ վստահությունը տարիների և տասնամյակների պատմություն ունեն: Լազարյանների արխիվը բովանդակող բոլոր վեց հատորներում չկա մի պետական և հասարակական գործիչ, որը նամակների քանակով հավասարվեր Ներսես արքեպիսկոպոսին: Նեկրայացվող հաջորդ նամակը գրվել է 1827 թ. հունիսին և հասցեագրված է ռուսաց թագավորին: Այն, որ Ներսեսն իրեն թույլ էր տվել նամակ գրել թագավորին, անուղղակիորեն հաստատում է, որ նա է եղել Մայր Աթոռի հիմնական ու գլխավոր անձը, քանի որ միայն կաթողիկոսն իրավունք ուներ անմիջականորեն դիմելու ռուսաց միապետին: Մեր կարծիքով՝ այստեղ մեծ դեր են կատարել երկու անձ. մեկն, ամենայն հավանականությամբ, Խաչատուր Լազարյանն էր, մյուսը՝ գեն. Կոնստանտին Բենկենդորֆն իր եղբոր միջոցով: Եվս մի կարևոր նկատառում. նամակն ամբողջությամբ Ներսեսը նվիրել է զուտ մի անձնական հարցի քննությանը, փորձելով Ղարաբաղի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Սարգիս Հասան-Ջալալյանին ազատել մեղադրանքներից ու դավաճանի պիտակից: Մեջբերենք նամակը թարգմանաբար. «Վրաստանի գլխավոր կառավարիչ գեներալ Երմոլովը 1826 թ. դեկտեմբերի 2-ի զեկուցագրով[11] ինձ տեղեկացրել էր[12], որ Ղարաբաղում խռովության ժամանակ (հավանաբար նկատի ունի տեղի թաթարների՝ ռուսներին դավաճանելը և պարսիկների կողմն անցնելը – Հ. Հ.), երբ կառավարության միակ հույսը հայերն էին, հայտնել է, թե իբր արքեպիսկոպոս Սարգիսն անցել է Աբաս Միրզայի կողմը և... իբր գտնվել է Շուշիի բերդի մոտ, դիմելով հավատակիցներին, փորձելով համոզել Շուշիի բերդի հայ պաշտպաններին՝ հանձնելու բերդը: Համարձակվում եմ հաստատել Ձերդ բարեծնություն և տեղեկացնել իրականում, որ հոգևորականությունից և ոչ ոք, նույնիսկ հայ աշխարհականն իր անունը չէր խայտառակի այդպիսի զզրելի դավաճանությամբ: Հենց այդ տեսանկյունից պետք է դիտարկել Արքեպիսկոպոս Սարգսի հետ կատարվածը, ինչը առիթ չի կարող տալ նրան մեղադրելու... ուստի, վերոհիշյալ հանգամանքը

[11] Լազարյանների արխիվում 106 թղթապանակի 112 վավերագրի տակ իսկապես պահպանվում է Ա. Երմոլովի 1826 թ. դեկտեմբերի 2-ին գրված զեկուցագիրը ռուսաց թագավորին, որտեղ մասնավորապես ասվում է. «Ղարաբաղի մարզի խռովության ժամանակ, երբ կառավարության հույսը հայերն էին, որպես մեզ հավատակիցներ, արքեպիսկոպոս Սարգիսը ոչ միայն հայտնի դարձավ նողկալի դավաճանությամբ և անցավ Աբաս Միրզա Ղաջարի կողմը, այլև իր կողմը թեքեց հայ ժողովրդի ավագներին և գտնվելով Շուշի բերդի մոտակայքում, համոզում էր բերդը պաշտպանող հայերին՝ ոգևորելով նրանց Ղաջարի մեծահոգությամբ»: թ.1:

[12] Հասկանալի չէ՝ կառավարչապետն ինչո՞ւ հենց Ներսեսին պետք է տեղեկացներ, եթե նրանից առաջ Ամենայն հայոց Վեհը կար:

նկատի ունենալով, խնդրում եմ թույլատրել Արքեպիսկոպոս Սարգսին վերադառնալ իր բնակության վայրը՝ Ղարաբաղ: Կայսր Տիրակալի հնազանդ ծառա և աստվածային աղոթքով՝ Արքեպիսկոպոս Ներսես: 14 հունիսի, 1827 թ. Ս. Էջմիածին»[13]: Ներկայացված փաստաթուղթը մեկ անգամ ևս հաստատում է ռուսական արքունիքում Ներսեսի ունեցած հեղինակությունը: Նա հանձն էր առել նամակ գրել անձամբ Տիրակալ-կայսրին, պաշտպանելով մի հոգևորականի, որին մեղադրում էին ամենամեծ մեղքի՝ դավաճանության մեջ: Արդյունքում՝ կայսրը ներում շնորհեց Ղարաբաղի հոգևոր առաջնորդին:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմին նվիրված՝ հայ երևելիների նամակներում առանձնակի ոգևորություն է նկատվում հատկապես 1827 թ. գարնանը տեղի ունեցած ռազմական իրադարձությունների օրերին, երբ արդեն նշմարվում էր պատերազմի հաջող ելքը ռուսների օգտին, ուստի ամեն ջանք գործադրել են Երևանի բերդի գրավումը արագացնելու համար: Նամակներն ու հաղորդագրությունները հաջորդում են մեկը մյուսին. այն տպավորությունն է, որ բոլորն ուզում են օր առաջ Լազարյաններին հաղորդել տեղի ունեցած մարտերի մասին: Օրինակ, Ներսես արքեպիսկոպոսը 1827 թ. ապրիլի 20-ի նամակում հաղորդում է Հովհաննես Լազարյանին, որ ռուսաց զորքն արդեն գտնվում է Էջմիածնում և շուտով պետք է շարժվի դեպի Երևանի բերդ: Նա նաև գոհունակություն է հայտնում գեներալ Կ. Բենկենդորֆի վերաբերմունքից. «Նորին գերազանցութիւնն գեներալ Բէնկէնդօրֆն միշտ հարցանէ զՁէնջ և միշտ յանձնէ մեզ զողջոյն իւր գրել Ձեզ»[14]: Առավել կարևոր են արքեպիսկոպոսի նամակի հետևյալ տողերը. նա հաղորդում է, որ սահմանային գյուղերն ամայացած են, սակայն հույս կա, որ ռուսաց բանակի հաղթանակներից հետո ժողովուրդը կամաց-կամաց կհավաքվի. «ամենայն ժողովուրդք հեռացուցեալ իւրաքանչիւր բնակութեանց զմեզ ի սահմանս Օսմանցոց և պարսից, երկիրն առ հասարակ կայ որպէս ամայի և ամենայն երկրագործութիւն դադարեալ ամենևին, միայն հաստատում է յոյս մեր...»[15]: 1827 թ. ապրիլի 30-ին Խաչ. Լազարյանին ուղղված նամակում Մելիքսեթ քահանա Ղամազյանը հաղորդում է, որ Էջմիածնից ստացված լուրերի համաձայն, գեն. Բենկենդորֆը շրջապատել է Երևանի բերդը և սպասում է փոխարքայի գալստյանը ու մեծ թնդանոթների[16]: Իրենց հերթին, Լազարյանները շնորհապարտ են եղել հաղորդված տեղեկությունների համար և խնդրել հետագայում ևս շարունակել իրենց հաղորդել «վերջին լուրերը»[17]:

---

[13] Նույն տեղում, վավ, 115, թ. 3-4:
[14] Նույն տեղում, թղթ. 103, վավ. 84, թ. 1:
[15] Նույն տեղում:
[16] Նույն տեղում, վավ. 15, թ. 1:
[17] Նույն տեղում, վավ. 247, թ. 1:

*XIX դարի առաջին երեսնամյակին Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունների կոնտեքստում ուշագրավ են քաղաքական և հոգևոր գործիչների՝ Երևանի բերդը գրավելու և առհասարակ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու գնահատականները: Հայտնի է, որ խորհրդային և հետխորհրդային հայ պատմագիտության մեջ ռուսական տիրապետության գնահատականը միանշանակ չէ. «չարիք», «չարյաց փոքրագույնը» և «պատմական մեծ նշանակության իրադարձություն»: Խնդիր չդնելով այդ տեսակետների քննությունը, նշենք, որ պատմաբանները հանիրավի անուշադրության են մատնել հարցի առնչությամբ ժամանակի քաղաքական և հոգևոր հայ գործիչների արտահայտած կարծիքները: Ներկայացնում ենք Լազարյանների արխիվում պահպանված Մելիքսեթբեկ քահանա Ղամազյանի նամակը Խաչատուր Լազարյանին, որով նա շնորհավորում է Երևանի բերդի գրավման կապակցությամբ. «Շնորհաւորեմ ահաւասիկ զառումն ամրոցին Երեւանու: Արդարև՝ մեծ սքանչելիք աստուածային, որ ի ձեռն օծելոյն իւրո ամենաբարեպաշտ Կայսերն Մեծի Նիկողայոսի առաջնոյ ներգործեաց, յայսմ հետէ **յուսալի** է փրկութիւն Հայաստան աշխարհի և վերանորգութիւն սուրբ աթոռոյն Էջմիածնի»[18]: Նամակում հայտնվում է նաև, որ Թիֆլիսի հայկական եկեղեցում այդ առթիվ կատարվել է մեծ պատարագ. «Յամսոյս 9 մեծ հանդէս Մօլեբինի կատարեցաւ ի վանքի եկեղեցին, սրբազնակատար պատարիարգն զգեստաւորեցաւ և քարոզաբանն ևս, ի նոյն հանդեսի եղեւ նուաստութիւն իմ, յաւել քան զայսն մնալ անձնազոհ մտերմութեամբ»[19]:*

Այս առումով բնութագրական է Հովսեփ և Ստեփանոս վարդապետների նամակը, թվագրված 11 մայիսի 1827 թ. այսինքն՝ Էջմիածնի գրավումից հետո, Մինաս և Սիմոն արքեպիսկոպոսներին, որում հաղորդվում է ռուսաց զորքերի հաղթանակների մասին, մանրամասն թվարկվում են պարսիկների կորուստները, գերիների քանակը և այլն: Միաժամանակ հույս է հայտնվում, որ Պասկևիչը շուտով կգա և ազատության դրոշը կծածանի Երևանի բերդի վրա, նկարագրվում է հայ գյուղացիների վիճակը և այլն: «Լսելյաց ախորժելի համբաւ յաղթանակութեանց աստուածազօր զօրացն ռուսաց ստիպէլ զմեզ առ ժամաւս աւետէլ ձեզ զարժանաւորսն ուրախութեանց համառօտ այսու գրութեամբ: Յինն ամսոյս (ապրիլի – Հ. Հ.) նորին գերազանցութիւնն Բենկէնդօրֆ գեներալն հանդերձ հետևակ և հեծեալ զօրօք իւրոք գնացեալ յանկարծ ի վերա բանակի Հասան խանին, որ ի Սարվանլարու զօրուղն ահարկութեամբ բազմաւ կոխել զբանակս նոցին և այնպէս ամենայն ամենայն բազմութեամբ թափեալ ի մէջ զօրաց պարսից, սրախողխող և նիզակահար կոտորեն ի նոցանէ զարս իբրև երկու հարիւր, և

[18] Նույն տեղում, վավ. 271, թ. 1:
[19] Նույն տեղում:

գերեալ կենդանույն ի նոցանէ անձինս 55... Յուսով ենք, թէ նորին բարձր գերազանցութիւն Իվան Ֆեոդորովիչ Պասկևիչ կեսցէ հասցէ այսր մինչև ի յառաջակայ Կիրակին.... և բարձրասցի դրօշակ ահեղ տէրութեանն ի գլուխս պարսպացն Երևանու...»:[20] Նկատենք, որ այսօրինակ կայսերապաշտական բովանդակությամբ նամակները Լազարյանների արխիվում բավականին շատ են:

Նամակներում նույն կերպ է գնահատվում նաև 1827 թ. հոկտեմբերի 1-ին Երևանի բերդի գրավումը, որը համահայկական նշանակություն է ունեցել: Խնդիրը ռուսական գաղութային կամ նվաճողական քաղաքականությունը չէ. նամակներում ուրախության և ոգևորության արձագանքներ են, ինչը մեկ անգամ ևս հաստատում է, որ հայ ժողովրդի համար ռուսական քաղաքականության դրսևորումները երկրորդական դեր են խաղացել: Կարևորագույն խնդիրը պարսից տիրապետությունից ազատագրումն էր. այդպես են մտածել բարձրաստիճան հոգևորականից մինչև վերջին շինականը, թեպետ պարզից էլ պարզ էր, որ քաղաքական այդ դրսևորումները հետո պետք է ի հայտ գային: Մեջբերենք Հովհաննես արքեպիսկոպոսի՝ Խաչատուր Լազարյանին Երևանի բերդի առման կապակցությամբ ուղղված շնորհավորանքից. «3 հոկտեմբերի 1827 ամի: Շնորհաւորեմ գերազանցութեան Ձերում զառումն Երևանայ, զոր յետ վեցօրեայ պաշարման և չորեքօրեայ շինութեամբ մարտկեցացն՝ առաք ի հոկտեմբերի 1: Աշխատութիւն մեր ի պաշարման բերդին մեծ եղեաւ յոյժ և յաջողութիւն հրազինութեան մերոյ ևս անասելի որ ամենայն ուրեք գործ եւ զաւէր էր ահագին. ի վերջին գիշերի յառաջ քան զառումն Երևանայ՝ կասկածեալ թշնամին ի յարձակմանէ մերմէ, սկսաւ դատարկել զթնդանօթս իւր ի վերայ մեր, այլ յաջող ռմբաձգութիւն Մեր անցանելով ի ընդ պատառուածս երկուց կողմանց պարսպին և հարուածեալ զբերդապահսն, վնաս մեծ հասուցին նոցա, ստիպեցին դադարել և շփոթեցին զամենայն կարգ նոցա, որ հետզհետե առաւելոյր ի յայտնի վտանգէ երկուց կողմանց պարսպին և յաղաղակէ բնակչացն, որք ի ռմբաձգութեանց մերոց, կրելով զվնաս ահագին, պահանջէին անձնատուր լինել...»[21]: Հովհաննես արքեպիսկոպոսը հաջորդիվ ընդգծում է Ի. Պասկևիչի կայսերական զեկուցման հետևյալ տողերը. «Հասան խան սարդար, եղբայր սարդարին, ևս և այլ հինգ խանք և այլ աստիճանաւորք, պարսից՝ եղեալք առ նոսա յանուն ի տեղւոջէ Թագստեան իւրեանց և գերեցան: Ի բերդին գտան 46 զանազան մեծ ու փոքր աստիճանաւորք, թնդանօթք, և 4 բայդաղք. Թիւք գերելոցն է ավելի քան զ3000: Ի կողմանե մերմէ սպանան 1 օբերօֆիցեր և 4 փոքր աստիճանաւորք, վիրավորեցան 2 օբերօֆիցեր և 36 փոքր աստիճանաւորք: Գիտել արժան է, զի Աբբաս Միրզայն առ ի զօրացուցանել զպահպանութիւն բերդին էր աստանօր զընտիրս

[20] Նույն տեղում, թղթ. 106, գ. 51, վավ. 25, թ. 1:
[21] Նույն տեղում, թղթ. 103, վավ. 272, թ. 1:

զօրաց իւրոց, ի նմին համարի զմի գունդ ի թիկնապահաց իւրոց... Աճապարելով ծանուցանել գերազանցության Զերում զայս բարիբաղդ յաջողութիւն զմիտ գիտեմ, զի խնդակցեալ մեզ յայսմ հասարակազուարճ ուրախութիւն յաստնեսջիք զայս տեղեաց իմումս կառավարութեան յանձն եղելոց: Ստորագրեալ է գեներալ օտ ինֆանտերիի Պասկեւիչ»[22]: Հավելենք նաև, որ հետգրության մեջ Հովհաննես Լազարյանն առաջարկում է նամակի բովանդակությանը ծանոթացնել ղեկավարությանը՝ հավանաբար նկատի ունենալով հայոց կաթողիկոսին և մյուս երևելիներին:

Քանի որ մեջբերված տեքստը գրաբարով է, ուստի մենք փորձեցինք հաղորդած տեղեկությունները ճշտել՝ համեմատելով այն ռուսական նշանավոր Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում գեներալ Իվան Պասկևիչի՝ կայսր Նիկոլայ I-ին Երևանի բերդի գրավումից երկու օր անց՝ 1827 թ. հոկտեմբերի 3-ին ներկայացրած զեկուցագրի հետ. «Նորին Մեծության Կայսեր դրոշը փողփողում է Երևանի բերդի պատերին: Այդքան փառաբանված բերդի բանալիները, նրա ողջ կայազորը գերի են վերցված՝ իրենց գլխավոր հրամանատարների և անձամբ Հասան-խանի հետ միասին, որն այս անգամ չկարողացավ փախչել... Գրաված ավարն են նաև 4 դրոշակները, 37 հրանոթը, 2 հաուբիցը, 9 մորտիրը... Եվ վերջապես, բնակիչների հպատակությունն ու շնորհապարտությունը, որոնք ազատագրվել են դաժան հալածողներից... ամսի 29-ին (նկատի ունի սեպտեմբերի – Հ. Հ.) ես, համոզվելով Երևանից դուրս եկածների տված ցուցմունքներից, որ բերդի ներսում տատանվողները շատ են, Հասան խանին առաջարկեցի հանձնել բերդը, պայմանով, որ նրանք ազատ դուրս կգան բերդից, որի համար 6 ժամ մտածելու ժամանակ տվեցի, ցանկանալով ամենից առաջ ժամանակ շահել պաշարումն ավելի հաջող շարունակելու համար: ... մեկը մյուսի հետևից ավերվում էին տները, ավերածությունների փոշին տարածվել էր ողջ բերդի վրա... երրորդ օրը կեսօրին ինձ մոտ նամակով եկավ Հասան խանի պատվիրակը: Նամակի բովանդակությունը բավական սարսափած անձի մի համաձայնություն էր, սակայն, դրանից առաջ նա ցանկանում է հարցնել Աբաս Միրզայի կարծիքը: ... Ես նրան պատասխանեցի՝ հանձնել բերդը հիմա և անվերապահ, կամ՝ կտեսնի ռուսական զենքի ողջ ուժը...[23]»: Անշուշտ, կարելի է նկատել հայկական և ռուսական տեքստերում բերդի հանձնման հետ կապված շեշտադրման տարբերությունները:

Լազարյանների արխիվում մեր ուշադրությունը գրավեցին նաև Ներսես արքեպիսկոպոսի այն նամակները, որոնք վերաբերում են Թուրքմենչայում կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրի և Մակուի գավառի շուրջ ծագած

---

[22] Նույն տեղում, թ. 2:

[23] Акты кавказской археографической комиссии, т. VII, Тифлис, 1878, с. 565-566.

հարցին: Հայտնի է, որ Ներսես Աշտարակեցին ամեն ջանք գործադրել է՝ ժամանակին Երևանի խանության անբաժան մաս կազմած Մակուի գավառը հաշտության արդյունքում Երևանին միացնելու համար: Եվ թեպետ նամակն արդեն իսկ ուշացած էր, քանի որ 1828 թ. փետրվարի 10-ին արդեն կնքվել էր Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը, սակայն նույնիսկ այս պարագայում Ներսեսը չէր հանգստանում և գեն. Կ. Բենկենդորֆին 1828 թ. փետրվարի 27-ին ուղղված նամակում հայտնում էր իր դժգոհությունը, որպեսզի վերջինս անձամբ կամ եղբոր միջոցով այն փոխանցի թագավորին. «Մակուի գավառի մասին ինձ հասած լուրերի համաձայն՝ Կորպուսի հրամանատարի և Աբաս-Միրզայի միջև կնքված հաշտությունում գավառը զիջվել է պարսիկներին: Պատիվ ունեմ, սիրելի գեներալ, բացատրելու, որ դեռևս անցյալ տարի դեկտեմբերի 24-ին տեղեկացա, որ Մակուի գավառը պետք է մնա Պարսկաստանին, ուստի հատուկ գրություն ուղարկեցի գեներալ-լեյտենանտ Կրասովսկուն և խնդրեցի այս հանգամանքի մասին տեղյակ պահել հրամանատարությանը: Նորին բարեծնությունը (գեն. Կրասովսկին – Հ. Հ.) նշված գրությունը հանձնել էր Կորպուսի հրամանատարին... Նորին բարեծնությունը (Իվան Պասկևիչը – Հ. Հ.) գրել էր գեն. Կրասովսկուն, թե հարկ չկա միջամտելու նմանօրինակ գործերին և թե իբր այդ մասին իրեն ոչինչ հայտնի չէ, թեև իր մոտ ուներ իմ հիմնավորման պատճենը, որ Մակուի գավառը նախկինում եղել է Երևանի նահանգի մի մասը և մշտապես գտնվել է Երևանի ենթակայության տակ»[24]: Փաստորեն, ինչպես պարզ է դառնում գրությունից, տարածքների հանձնման հիմնական մեղավորը կորպուսի հրամանատար Իվան Պասկևիչն է, և նրա անհետևողականության հետևանքով էր, որ Մակուի գավառը քննարկման առարկա չի դարձել բանակցությունների ժամանակ: Մեր կարծիքով, պարսկական կողմը թերևս առարկելու ոչինչ չէր ունենա, քանի որ մինչ այդ, բանակցության առարկա մարզերը (Ղարաբաղ, Նախիջևան, Շաքի, Շիրվան, Բաքու) Ռուսաստանին են միացել իրենց նախկին սահմաններով հանդերձ: Ուշագրավ է, որ Ներսես Աշտարակեցին ռուսական հրամանատարությանը և արքունիքին այս հանգամանքը հիմնավորել է տնտեսական և ռազմավարական նշանակության գործոնով. «Այնտեղի բնությունն իր արոտավայրերով և կիրճերով բավականին նպաստավոր է անասնապահության զարգացման համար: Քրդերը և քոչվոր մյուս ժողովուրդները ամառ թե ձմեռ մշտապես այստեղ են և, եթե այս երկրամասը թողնվի պարսիկներին, ապա նրանք վտանգավոր կդառնան Երևանի մարզի համար... սակայն եթե այն մնա Երևանի մարզի կազմում, ապա հզոր պատվար կդառնա պարսիկների և թուրքերի չար նպատակների դեմ, քանի որ բնական այդ ամրությունները հարկավոր են Երևանի մարզի հանգստության համար՝ ամուր շղթա կազմելով սահմանի

[24] Նույն տեղում, թղթ. 106, գործ 51, վավ. 156, թ. 1:

վրա... Բոլոր այս հանգամանքները հաղորդելով Ձեզ, – ավարտում է իր նամակը Ներսեսը, – խնդրում եմ, պատասխանեք՝ կա՞ արդյոք հնարավորություն վերադարձնելու Մակուի գավառը հայերին և դրանով իսկ նրանց ազատելու ապագա վտանգներից»[25]*:*

*Ներկայացված վավերագիրն ակնառու կերպով հաստատում է Ներսես Աշտարակեցու քաղաքական հեռատեսությունը, համահայկական խնդիրները դիվանագետին հատուկ ճկունությամբ ձևակերպելու նրա բացառիկ ունակությունը: Անշուշտ, հայ քաղաքական և հոգևոր գործիչների մեջ նա եզակի երևույթ էր: Խնդիրն, իհարկե, այն չէր, որ ռուսական կառավարությունն անմիջապես արձագանքելու էր հայազգի արքեպիսկոպոսի նամակ-հորդորին, սակայն քաղաքական բարեկրթությունից ելնելով, գեն. Բենկենդորֆն, այդուհանդերձ, պատասխանել է Ներսեսի նամակին: «Սիրելի արքեպիսկոպոս, – գրել է ռուս գեներալը, – հատուկ շնորհակալությամբ ստացա փետրվարի 27-ին Երևանի բերդից գրած Ձեր նամակը: Մակուի գավառի մասին տեղեկությունը ես արդեն ում որ պետք է՝ հայտնել եմ... **սակայն այն իրագործելու համար միայն ցանկանալը բավարար չէ, հատկապես երբ դեմ եք արտահայտվել սահմանների շուրջ արդեն ձեռք բերված համաձայնությանը**... (ընդգծումը մերն է – Հ. Հ.): Մինչդեռ այս հանգամանքը առավելապես կախված է Տեղական Գլխավոր Կառավարչից (գեն. Բենկենդորֆն, անշուշտ, նկատի ունի Պասկևիչին – Հ. Հ.) ... Ինձ և իմ եղբորը շատ ավելի ցանկալի կլիներ, որ ճակատագիրը Ձեզ կրկին տեսնելու պատեհ առիթ ստեղծեր... Ցանկանում եմ առողջություն և հաջողություններ ձեր գործերի մեջ, որոնց Դուք նվիրված եք այս դժվարին օրերին՝ հանուն հասարակական բարօրության...»*[26]*: Ուստի անհաջողությամբ հանդերձ, Ներսես արքեպիսկոպոսի այս արարքը գնահատանքի արժանի սխրանք է՝ մի վերջին փորձ՝ համոզելու ետ բերել հայկական այդ երկրամասը: Ուշագրավ է նաև, որ 1828 թ, փետրվարի 15-ին՝ այսինքն Թուրքմենչայի պայմանագրից հինգ օր անց, Ներսեսն արժանանում է Ալեքսանդր Նևսկու շքանշանի: Ուստի, կարելի է կապ տեսնել Կ. Բենկենդորֆին ուղղված նամակների և ռուսական կառավարության կողմից նրան բարձրագույն պարգևի արժանացնելու մեջ: Մեր կարծիքով, դրանով փորձել են շահել իրենց այդքան աջակցություն ցուցաբերած Ներսեսի սիրտը, քանի որ գիտեին ռուսական կառավարությանը նրա ուղղած դիմումների մասին: Ուշագրավ է նաև, որ նամակը թվագրված է 6-ը մարտի, 1828 թ.*[27]*, այսինքն՝ Ներսեսին Ռուսաստանի բարձրագույն պարգևի արժանացնելու թագավորի որոշման մասին տեղեկացրել են քսան օր հետո միայն:*

---

[25] Նույն տեղում, թ. 2-3:

[26] Նույն տեղում, վավ. 158, թ. 1-2:

[27] Նույն տեղում, վավ. 130, թ. 1:

Ներսես արքեպիսկոպոսը մշտապես արտահայտել է իր կարծիքը Հայաստանին և հայերին վերաբերող հարցերում, չմտահոգվելով՝ դա դուր կգա՞ ռուս պաշտոնյաներին ու գեներալներին, թե՞ ոչ: Ապացույցն այս անտիպ նամակն է՝ ուղղված Խաչատուր Լազարյանին, որում արքեպիսկոպոսն իր կարծիքն է հայտնում Վ. Բեհբութովին Հայկական մարզի կառավարչի պաշտոնից ազատելու առթիվ: Ներսեսը գրում է, որ իրեն հասցեագրված նամակներից պարզել է, թե իշխան Վ. Բեհբութովն ազատվելու է ստանձնած պարտականություններից, և որ դա դիտվում է որպես անվստահության նշան, թեպետ ինքը դա անհիմն է համարում, քանի որ բոլոր հայերը միաբանությամբ հպատակված են ռուսներին. «աւելի ևս քան զգրեալսն ...գրեալ էին, թէ զկնեազ գեներալ մայօր Վասիլ Յովսեփեան Բեհբուտեանց կարգեալ կառավարիչ նահանգին հայոց, արձակեցին ի պարտաւորութեանց անտի զկնեազ Ալեքսանտր Իվանիչ Ճավճաւաձեն, և ինձ թուի, թէ այս փոփոխութեամբ յատուկ առ այն իցեն արարեալ, իբրու կամաւ որպէս հայ կարողասցի համոզել զյուսահատութիւն հայոց և կամ թէ մեղադրութիւնն ամենայն կարողացին շրջել ի վերայ հայոց ըստ ամենայնի ասելով թէ որպէս ժողովուրդն նոյնպէս և կառավարիչք նոցին գոլով հայ, այնուամենայնիւ ոչ կացին ի հարազատութեան տէրութեան ռուսաց»[28]*:*

Նամակում մի այսպիսի ուշագրավ հատված կա. «Վասն աղայ Եղիազարու Յովակիմեան գրեն, թէ ի 25 մայիսի ունի ելանել ի Թիֆլիզոյ գնալ ի ջուրսն Կովկասու... և որ կարաց զայնքան բազմութիւն հայոց շարժել ի տեղւոջէ իւրեանց և վառել ի սէր տէրութեան ռուսաց այնպէս, մինչև միաբան բազմութիւն ամենեցուն... պատասխանեցին՝ ի կողմանէ տէրութեան պարսից հարցանողացն յինքեանն, թէ լաւ է մեզ ի հպատակութեան ռուսաց ուտել զիսոտ, քան թէ ի տէրութեան պարսից ուտել զհաց»[29]*: Ներսես արքեպիսկոպոսն ավելացնում է. «ի վերջոյ ոչ կարաց նա ամենայն արժանաւորութեամբ իւրով տանիլ հալածանացն իւրոց հալածչաց և թողեալ զամենայն գալ յետս՝ ի տեղի իւր, ողորմելի բազմութիւնք աղքատ ժողովրդեան... Զիարդ կարող իցեն տանել այնպիսի դիտավորութեամբ Կառավարչաց իւրեանց»*[30]*: Ավելին, ներկայացնելով Լ. Լազարյանի կազմակերպած վերաբնակեցման գործընթացի հետ կապված դժվարություններն ու հայերի հավատարմության շուրջ ռուսական արքունիքում առկա կասկածները, դժգոհում է, ասելով, որ այդ ամենն իրեն անհանգստություն է պատճառում*[31]*: Բնականաբար, դժվար չէ կռահել Ներսես Աշտարակեցու և հայ մյուս երևելիների անհանգստության պատճառը՝ Հայաստանի արևելյան հատվածը հայկական բնակչությամբ վերաբանակեցնելու խնդրում:*

---

[28] Նույն տեղում, վավ. 88, թ. 1:
[29] Նույն տեղում, թ. 1-2:
[30] Նույն տեղում, թ. 2:
[31] Նույն տեղում:

Մատենադարանի Լազարյանների արխիվում մի առանձին խումբ են կազմում Ներսես Աշտարակեցի-Պասկևիչ հակամարտությանը վերաբերող հաղորդումներն ու նամակները: Եվ քանի որ այս խնդրի մասին շատ է խոսվել ու գրվել[32], բավարարվենք մի քանի մինչ օրս անտիպ նամակներ մեջբերելով: Ներսեսի նամակը Խաչատուր Լազարյանին. թվագրված է՝ 31 հուլիսի 1829 թ.: Ուղարկում է որոշ գրությունների պատճեններ, որոնց մեջ խոսվում է իր և Ի. Պասկևիչի փոխհարաբերությունների մասին. «Առաքեմ ընդ այսմ զօրինակս գրութեանց ոմանց. յաղագս հասու լինելոյ վասն բարեհոգ աշխատութեանց նորին պայծառութեան գրաֆի Երևանայ ի մասին մեր: Գտանին և այլք այնպիսիք, զորոց ևս զկնի թէ արժան դատել լինիցի, ծանուսցուք, քանզի չկամին թէ ի սինոդին զբաղեսցին միտք ձեր կամ մեր հավաստի լինելով, թէ ոչ ատեսցին բանք աստուածայինք և ի վաղճան ամենայնի փառաւոր հանգեսցի արդարութիւն հալածեալ»[33]: Փաստորեն, Ներսես արքեպիսկոպոսը բավական հանգիստ է «հալածեալ արդարութիւն» հասատելու խնդրում. ավելին, շահագրգիռ է այդ արդարությունը բացահայտելու: Նամակում Ներսեսը պատրաստակամություն է հայտնում նաև լինել Պետերբուրգում և այդ հարցերի մասին խորհրդակցե գեն. Բենկենդորֆի հետ: Այլ խոսքով՝ ակնհայտ է, որ խնդրին վերաբերող հարցերում Աշտարակեցին ապավինել է գեն. Բենկենդորֆի աջակցությանը, ուստի նաև այստեղ պետք է փնտրել այդ հանգստության պատճառը:

Նույն թեմային է վերաբերում նաև Խաչատուր Լազարյանին ուղղված Ներսես արքեպիսկոպոսի 1829 թ. սեպտեմբերի 18-ին Քիշնևից ուղարկված նամակը: Նամակում Ներսես Աշտարակեցին շնորհակալություն է հայտնում Լազարյաններին՝ իրեն և Պասկևիչին հաշտեցնելու ջանքերի համար. «Նորին վեհազնությունն աղայ Խաչատուրն Յովակիմեան գրեալ էր մեզ ընդ յայտնութեանցն վասն եկաւորութեանն ձեր առ ինքնեանս նաև զաշխատութանցն ձերոց անդէն՝ ի Սանկտ Պետերբուրխ ի մասին մէր և զխոստմանցն ձեզ նորին գերազանցութեան Դաշկովի յաղագս բարեբանութեանցն զմենջ գրաֆի Երևանայ յօգուտ մեր հոգածութեանցն, և զյառաջադիմութեանցն յաղագս հնարելոյ զեղանակ հաշտութեան ընդ նմա առ որս զգացմամբ բազում պարտաւորութեանց իմոց ձերում առաւելապատիկ սիրոյն առ սեպհական անձն իմ ու բարեգործութեանցն յօգուտ հայրենեաց հասարակութեան, մատուցանեմ ձեզ զգերագույն շնորհակալութիւն իմ և աղաչեմ զմարդասէր տէրն մեր»[34]:

---

[32] **Վ. Դիլոյան**, *Արևելյան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները*, Երևան, 1989, **Ջ. Գրիգորյան,** *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը*, Երևան, 1975 և այլն:

[33] Նույն տեղում, վավ. 95, թ. 1:

[34] Նույն տեղում, վավ. 92, թ. 1:

Նամակում այնուհետև ներկայացվում են հոգևոր առաջնորդի և կոմսի գժտության պատճառները, թեպետ Ներսեսը ոչնչում իրեն մեղավոր չի համարում. միայն ենթադրություն է հայտնում, թե այդ ամենի պատճառ կարող էր դառնալ իր բարեկամությունը գեներալներ Կ. Բենկենդորֆի, Ա. Կրասովսկու և Ն. Սիպյագինի հետ: Ուշագրավ է, որ նշում է նաև մտերմությունը գեներալ Ա. Երմոլովի հետ. «Սակայն զճշմարտութիւն բանիցս համաձայն և աւտարանեալ պարտաւորութեանց Մերոց անտարակոյս ընկալցին իբրև զճշմարտութիւն անարատ և անխառն յամենայն ոճոյ բանից հասարակեալ քաղաքավարութեանց, զի յօրէ մտանելոյ գրաֆի Երևանայ՝ ի սահման Վրաստանու կամ տեսանելոյ իմ զերեսս նորա և ոչ միով բառիւ կամ նշանակեցիր երեք գործոց չեմ ես տուեալ նմա զպատճառս այնպիսի թշնամանադրութեան նորա մեզ. այլ որպէս պարզ ճշմարտութիւն է, միաձայն առհասարակ և ամենայն ժողովուրդ հայոց՝ եղեալ եմք նմա, բարեկամ ամենայն զօրութեամբ և կարողութեամբ մերոց կամաց և գործոց մերոց...»[35]*: Նամակի վերջում Ներսես Աշտարակեցին հայտնում է գեներալ Վալերիան Մադաթովի մահվան ցավալի լուրը (հայազգի զորավարն իր մահկանացուն կնքել է 1829 թ. օգոստոսի 31-ին – Հ. Հ.): Ներսեսը Լազարյաններին է հաղորդում նաև Օսմանյան Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանները, որ իրեն հաղորդել է գեներալ Ա. Կրասովսկին*[36]*:*

Ամփոփենք. XIX դարի առաջին երեսնամյակում Արևելյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերի քննության ժամանակ կարևոր տեղ պետք է տալ հայկական աղբյուրներին, որոնք ոչ միայն չեն զիջում ռուսականին, այլև բազում առումներով առավել բնութագրական են ու հավաստի: Առանց այդ աղբյուրների պատշաճ ուսումնասիրության հիմնահարցի քննությունն, անշուշտ, չի կարող ամբողջական համարվել:

HAYKAZ HOVHANNISYAN

ARMENIAN SOURCES ABOUT THE RUSSIAN-PERSIAN WAR OF 1826-1828

Keywords: Matenadaran, Lazarev archive, Russian-Persian war, documents, Nerses Ashtarakets‘i, the Lazarevs, letters.

In addition to Russian sources, Armenian documents are also important in the

[35] Նույն տեղում:
[36] Նույն տեղում, p. 2:

study of the Russian-Persian war of 1826-1828. Such documents are kept in the Lazarev archive at Matenadaran. These are letters of famous Armenian political and religious figures, which not only supplement the history of the Russian-Persian war but also provide important details about the events that took place in the eastern part of Armenia at the beginning of the 19th century.

ОГАНЕСЯН АЙКАЗ

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О РУССКО-ПЕРСИДСКОЙ ВОЙНЕ 1826-1828 ГГ.

Keywords: Матенадаран, архив Лазаревых, русско-персидская война, документы, Нерсес Аштаракеци, Лазаревы, письма.

В изучении русско-персидской войны 1826-1828 гг., помимо русских источников, важное место занимают армянские документы. Таковые хранятся в архиве Лазаревых, в Матенадаране. Это письма и рассуждения известных армянских политических и духовных деятелей, которые не только дополняют историю русско-персидской войны, но также сообщают важные подробности событий, происшедших в начале XIX в. в Восточной Армении.

ՕՎՍԱՆՆԱ ՔԵՇԻՇՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ Հ՝ 11219 ՁԵՌԱԳԻՐԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՕՐԻՆԱԿ

Նկ. 4. ՄՄ 4052, Արճեշ, Տիրամայրը Մանկան հետ, 5ա



Նկ. 5. Ձեռագրի 7բ էջի հիշատակարանը կրկնագիր կարդացող սարքով նկարելուց հետո

Նկ. 6. ՄՄ 11219, Ավետում, 1ա

Նկ. 7. ՄՄ 11219, Ծնունդ, 1բ

Նկ. 8. ՄՄ 2374,
Էջմիածնի Ավետարան,
Մոգերի երկրպագություն, 10ա

Նկ. 9. ՄՄ 11219, Մկրտություն, 2ա

Նկ. 10. ՄՄ 11219,
Ընծայումը տաճարին

Նկ. 11. ՄՄ 11219,
Խորհրդավոր ընթրիք, 4բ

Նկ. 12. ՄՄ 3723, 1045 թ.,
Խորհրդավոր ընթրիք, 2բ

Նկ. 13. ՄՄ 11219, Մատնություն, 5ա

Նկ. 16. ՄՄ 11219, Քրիստոս խառակերպ գահին, 7ա,
Ստեփանոս Նախավկա, ՄՄ 982

Նկ. 17. ՄՄ 11219, Տաղավարիկ, 8ա, նկ. 18, ՄՄ 4814,
Արգեան, Տաղավարիկ, 4բ, նկ. 19, Վիեն. 697, Տաղավարիկ, 6բ

ԴԱՎԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ

ՄԻ ԵԶԱԿԻ ՄԱԳԱՂԱԹՅԱ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ
(ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌ. Հ^{ՄՐ} 10665)

Նկ. 1. Ղուկաս ավետարանիչ
ՄՄ 10665, 90բ

Նկ. 2. Կիսախորան-անվանաթերթ
ՄՄ 10665, 2ա



Նկ. 3. Տպագիր էջ՝ զարդարված մանրանկարներով
(բուսական լուսանցազարդ և թոչնագիր) ՄՄ 10665, 93ա

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

ՆՈՐԱՀԱՅՏ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՄԵՂՐԻԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ

Նկ. 1. Ս. Հովհաննես վանքի ընդհանուր տեսքը՝ հյուսիս-արևմուտքից

Նկ. 2. Գաղտնարանը՝ պեղումների ավարտին

Նկ. 3. Գաղտնարանից հայտնաբերված կտավը

Նկ. 4. Կղեմես Գալանոս, Քերական և տրամաբանական ներածութիւն առ յիմաստութիւնն շահելոյ, Հռոմ, տպ. Ուրբանյան 1645 թ.

Նկ. 5. Շարակնոց, Ամստերդամ, 1698 թ.

Նկ. 6. Ներսես Շնորհալու «Յիսուս որդի», տպ. Ջուան-Բատիստա Բովիս, 1660 թ.

Նկ. 7. Պարտամուրհակներ, նոտրգիր, XVIII-XIX դդ.

ՄՈՆԹԵ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՌԱՆՁԻՆ ՏԱՃԱՐԻԿ-ՄՈԴԵԼՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԱՍԱՆՑ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

Նկ. 1. Հաղբատի
Ս. Նշան եկեղեցի (991 թ.),
արլ. ճակատ

Նկ. 2. Սանահինի
Ս. Ամենափրկիչ եկեղեցի (966 թ.),
արլ. ճակատ



Նկ. 3. Աղթամարի
Ս. Խաչ եկեղեցի (915-921 թթ.),
արմ. ճակատ

Նկ. 4. Էջմիածնի
Ավետարան (989 թ.)

Նկ. 5. Սանահինի
Ս. Աստվածածին եկեղեցի,
հս-արլ. ավանդատուն

Նկ. 6. Սյունիքից գտնված
եկեղեցու մոդել

Նկ. 7. Սյունիքից գտնված
եկեղեցու մոդել

Նկ. 8. Տուն-մոդել,
(մ.թ.ա 100 - մ.թ. 100)

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄՈՒՏՔՈՎ ԴԱՄԲԱՐԱՆ-ՄԱՍՈՒՆՔԱՐԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ԳԱՂԱՓԱՐԱԾԻՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ V-VI ԴԱՐԵՐՈՒՄ

ՆԿ. 1. Տիգրանակերտ, վաղքրիստոնեական հրապարակ, ընդհանուր տեսքը, 2019 թ.

ՆԿ. 2. Տիգրանակերտ, մեծ եկեղեցին, տեսքը հարավ-արևմուտքից, 2009 թ.

ՆԿ. 3. Տիգրանակերտ, մեծ եկեղեցու շքամուտքի խոյակներից, խաչը այգային միջավայրում

ՆԿ. 4. Տիգրանակերտ, փոքր եկեղեցին և տապանաքարը, 2014 թ.

ՆԿ. 6. Տիգրանակերտ, դամբարան-մասունքարանի արևելյան մուտքը

ՆԿ. 8. Ամարաս, ս. Գրիգորիսի դամբարան-մասունքարանի արևելյան մուտքի աստիճանները պեղումներից հետո, 2014 թ.

Նկ. 10. Վաճառ, ս. Ստեփանոսի դամբարան-մասունարանի կոթողի խաչակալը

Նկ. 11. Վաճառ, թեավոր խաչի բեկորներ ս. Ստեփանոսի դամբարան-մասունարանի պեղումներից

ՆԿ. 12. Հայերեն արձանագրություններով կավե սկավառակ Տիգրանակերտի մեծ եկեղեցու պեղումներից, դիմերեսը

ՆԿ. 13. Ապակե սրվակ Տիգրանակերտի մեծ եկեղեցու պեղումներից

Նկ. 14. Կավե դրոշմազարդ սկավառակ Խաչելության պատկերով, Տիգրանակերտի մեծ եկեղեցու պեղումներից

ՆԿ. 15. Ցիցսարի դամբարան-մասունարանը պեղումներից հետո, տեսքն արևմուտքից, 2019 թ.



ՆԿ. 16. Տիգրանակերտի և շրջակայքի վաղքրիստոնեական համալիրները.
1. վաղքրիստոնեական հրապարակը,
2. Վանքասարի եկեղեցին,
3. ժայռափոր համալիրը,
4. Ցիցսարի դամբարան-մասունարանը

ՆԱԶԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ

ՎԱՉԱԳԱՆԻ ՎԵՊԸ ԵՎ ԽԱՉԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՂՎԱՆՔՈՒՄ

Նկ. 1. Վաչագանի կրոնական բաղաքականության արդյունքում ձևավորված նոր սրբազան տարածքները Աղվանքի թագավորության աջափնյա՝ Արցախի և Ուտիքի նահանգներում (երկրի քարտեզը՝ ըստ Ա. Հակոբյանի և Հ. Կիզողլյանի)

ա.

բ.

գ.

Նկ. 2. Գողգոթայում կանգնեցված թեոդոսյան խաչի պատկերագրական օրինակներ
ա. Թեոդոս II-ի ոսկեդրամ, 420-423 թթ., Իսրայելի ճնագիտական թանգարան
բ. Խորանի խճանկարի հատված, V դ. Սանտա-Պուդենցիանա եկեղեցի, Հռոմ
գ. Խորանի խճանկարի հատված, V-VI դդ. Սանտ-Ապոլինարե ին Կլասսե, Ռավեննա

դ. Գունանկար սվաղի վրա, բեկոր, VI դ., Կեսարիա (Պաղեստին)

ե. Քրիստոսի Երկրորդ գալստյան խորհրդանշական պատկեր, խճանկար. V դ , Արիոսականների մկրտարան, Ռավեննա

ՆԿ. 3.
Կոստանդին Մեծի տեսիլքի խաչի պատկերագրական օրինակ, Հուստինիանոսի շքախումբը պատկերող խճանկարի դրվագ, VI դ., Սան-Վիտալե, Ռավեննա

ա.

բ.

ՆԿ. 4. Գողգոթայի բլրակի վրա կանգնած խաչի կոթողի ոճավորված պատկերագրական օրինակներ
ա. Խորանի խճանկար, V դ., Սանտա-Պուդենցիանա եկեղեցի, Հռոմ
բ. Մանրանկար, ՄՄ 10359, էջ 4բ

ա.

բ.

գ.

դ.

ե.

5. ԼՂՀ, Մարտունու շրջանի Գիշի (Գիս) գյուղի շրջակայքը (2009 թ.)

ա. Գիշի *(Գիս)* գյուղի մոտակայքում գտնվող չպեղված հինավուրց բաղամի տեսարան

բ-գ. Հին բաղամի պաշտպանական պարսպի մնացորդները

դ-ե. Ոսկե խաչ սրբավայրը՝ Գիշի *(Գիս)* գյուղի հինավուրց աղբյուրի մոտ

ԱՎԵՏԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԳԵՂԱՄ ԱՍԱՏՐՅԱՆ

ՄԱՔՐԱՎԱՆՔԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԽԱՉՔԱՐԵՐԸ (IX-XI ԴԴ.)

Նկ. 1.

Նկ. 2.

Նկ. 3.

Նորահայտ խաչքարեր, IX-X դդ., Մաքրավանք

Նկ. 4. Խաչքար, 879 թ., լուսանկարը՝ Տ. Վարդանեսովայի

Նկ. 5. Նորահայտ խաչքար, IX-X դդ., Մաքրավանք

Նկ. 6. Նորահայտ խաչքար, IX-X դդ., Մաքրավանք

Նկ. 7. Խաչքար, 986 թ., Մուղնի, լուսանկարը՝ Տ. Վ.

Նկ. 8. Խաչքար, IX-X դդ., Գառնի, լուսանկարը՝ Տ. Վ.

Նկ. 9. Խաչքար, IX-X դդ., Մաքրավանք

Նկ. 10.

Նկ. 11.

Նկ. 12.

Նկ. 13.

Նորահայտ խաչքարեր, IX-X դդ., Մաքրավանք

Նկ. 14. Նորահայտ խաչքար,
X-XI դդ.,
Մաքրավանք

Նկ. 15. Խաչքար,
X դ. վերջ, Ջրառատ,
լուսանկարը՝ Տ. Վ.

Նկ. 16. Խաչքար,
X դ. վերջ, Լեռնանիստ,
լուսանկարը՝ Տ. Վ.

Նկար 17, Խաչքար,
X դ. վերջ, Կեչառիս,
լուսանկարը՝ Տ. Վ.

Նկ. 18. Խաչքար, 976 թ.,
Մաստոց անապատ,
լուսանկարը՝ Տ. Վ.

Նկ. 19. Խաչքար, 1039 թ.,
Մաքրավանք,
լուսանկարը՝ Հ. Պետրոսյանի

ԳՐԵՏԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՍՊԱՀԱՆԻ ԱԼԻ ՂԱՓՈՒ ԵՎ ՋԵՀԵԼ ՍՈԹՈՒՆ ՊԱԼԱՏՆԵՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՐԳԻՍ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նկ. 1.
«Փետուրով գլխարկ»
Ալի Ղափու պալատ,
մոտավորապես 200×80սմ

Նկ. 2.
«Փետուրով գլխարկ»
ընդօրինակությունը
Ս. Խաչատուրյանի,
42×20սմ

Նկ. 3.
«Հովհարով աղջիկը»
հեղ. Ռեզա Աբբասի
1590-1592, 5.5×9.5սմ
Ֆրիր արվեստի
պատկերասրահ

Նկ. 4.
«Թագաժառանգ Մուհամմադ Բեյֆ»
հեղ. Ռեզա Աբբասի
16.8×8.8սմ
Բեռլինի պետական
թանգարան

Նկ. 5.
«Պահակախմբի սպա»
հեղ. Ռեզա Աբբասի
1622-1624, 17.8×8.9սմ
Դետրոյտի արվեստի
ինստիտուտ

Նկ. 6. «Ամոթխածը»
որմնանկար
Ալի Ղափու պալատ,
մոտավորապես 200×80սմ

Նկ. 7. «Ամոթխածը»
ընդօրինակությունը
Ս. Խաչատուրյանի,
42×20սմ

Նկ. 8.
«Նախապատրաստվելով տոնին» որմն-նկ.,
Զեհել Սոթուն պալատ,
մոտավորապես 150×150սմ

Նկ. 9.
«Նախապատրաստվելով տոնին»
ընդօր. Ս. Խաչատուրյանի,
25×19սմ

Նկ. 10. «Մատովակը» որմնանկար,
Զեհել Սոթուն պալատ,
մոտավորապես 120×180 սմ

Նկ. 11. «Մատովակը»
ընդօր. Ս. Խաչատուրյանի,
25×19սմ

Նկ. 12. «Գեղեցկություն» որմնանկար,
Զեհել Սոթուն պալատ,
մոտավորապես 150×150 սմ

Նկ.13. «Գեղեցկություն»
ընդօր. Ս. Խաչատուրյանի,
31×22սմ